Երկրորդ հաղորդում

Հավիտենական կյանքը՝ Աստծու կյանքը՝ աստվածային բնությամբ, Եռամեկ Աստված Աստվածաշնչի կառուցվածքն է, և թաքցված Աստված՝ Իրեն թաքցնող Աստված

Գրվածքների ընթերցում. Հվի 4:24, Բ Պտ 1:1, 4-11, Ա Հվի 1:5, 4:8, 16, Ղկս 18:1-18

I. Աստվածային կյանքը կարող է համարվել Աստծու առաջին և հիմնական հատկանիշը.

Ա. Աստծու կյանքը եզակի կյանքն է:

Բ. Եփս 4:18-ը եզակի խոսք է, որը խոսում է Աստծու կյանքի մասին. «....հասկացողությամբ մթագնած լինելով, Աստծու կյանքից օտարացված՝ իրենց ներհատուկ տգիտության պատճառով, իրենց սրտի կարծրության պատճառով»:

Գ. Ողջ տիեզերքում միայն Աստծու կյանքը կարող է կյանք համարվել՝ Ա Հվի 5:12:

Դ. Աստծու աչքին միայն Իր կյանքն է կյանք. ուստի երբ Նոր Կտակարանում հիշատակվում է Աստծու կյանքը, ենթադրվում է, որ դա միակ, եզակի կյանքն է՝ Հվի 1:4, 10:10, 11:25, 14:6:

Ե. Աստծու կյանքն անստեղծ է, չունի սկիզբ և վերջ, ինքնագո է, մշտագո և երբեք չի փոփոխվում:

Զ. Հավիտենության տեսանկյունից՝ միայն Աստծու կյանքն է կյանք:

II. Հավիտենական կյանքն Աստծու կյանքն է՝ աստվածային բնությամբ.

Ա. Հավիտենական կյանքը՝ Աստծու կյանքը.

1. Չեռք բերել հավիտենական կյանքն այս դարաշրջանում.
   ա. Հավիտենական կյանքն Աստծու կյանքն է՝ Ա Հվի 1:1-2:
   բ. Հավիտենական կյանքը Տեր Հիսուսի մեջ է՝ 5:11-12, Հվի 1:4:
   գ. Հավիտենական կյանքը ձրի է տրվում Աստծու կողմից՝ Հռմ 6:23, Ա Հվի 5:11:
   դ. Հավիտենական կյանքը ձեռք է բերվում հավատալու ժամանակ՝ Հվի 3:16, 36, 5:24:
   ե. Հավիտենական կյանքը ճանաչվում է ներկա դարաշրջանում՝ Ա Հվի 5:13:
   զ. Հավիտենական կյանք ունենալ և երբեք չկործանվել՝ Հվի 10:28-29:
2. Չեռք բերել հավիտենական կյանքը գալիք դարաշրջանում.
   ա. «Չկա մեկը, ով հանուն Ինձ և հանուն ավետարանի թողեց.... և չի ստանա այժմ՝ այս ժամանակին.... իսկ գալիք դարաշրջանում՝ հավիտենական կյանք»՝ Մրկ 10:29-30:
   բ. «Մինչև մահ հավատարիմ եղիր, և Ես քեզ կյանքի պսակը կտամ»՝ Հյտ 2:10:
   գ. «Նրան, ով հաղթում է, նրան ուտել եմ տալու կյանքի ծառից, որն Աստծու դրախտում է»՝ խ. 7:

3. Վայելել կյանքը հավիտենությունում.
   ա. «Այն ջուրը, որ տալու եմ նրան, նրա մեջ ջրի ակունք կդառնա՝ հավիտենական կյանքի մեջ ներբխող»՝ Հվի 4:14:
   բ. «Ես ծարավին կյանքի ջրի աղբյուրից ձրի եմ տալու»՝ Հյտ 21:6:
   գ. «Որպեսզի կյանքի ծառի հանդեպ իրենց իրավունքն ունենան»՝ 22:14:

Բ. Աստծու կյանքը՝ աստվածային բնությամբ.
1. Որպես մարդիկ, որոնք հավասարապես թանկագին հավատք են ստացել, մենք՝ Քրիստոսին հավատացողներս, պետք է աստվածային բնության հաղորդակիցներ դառնանք՝ Բ Պտ 1:4.
   ա. «Աստվածային բնություն» արտահայտությունը վերաբերում է այն ամենին, ինչ Աստված է, այսինքն՝ Աստծու էության հարստությանը, տարրերին և բաղադրիչներին՝ Հվի 4:24, Ա Հվի 1:5, 4:8, 16:
   բ. Աստվածային կյանքն ու աստվածային բնությունը անբաժանելի են. աստվածային բնությունն աստվածային կյանքի էահիմքն է և աստվածային կյանքի ներսում է՝ 1:1-2, 5:11-13:
2. Մենք պետք է փորձառաբար ապրենք մեր մեջ սերմանված աստվածային սերմի մեջ պարունակվող աստվածային կյանքի և աստվածային բնության զարգացումը, որպեսզի հարուստ մուտք ունենանք հավիտենական թագավորություն՝ Բ Պտ 1:1, 4-11:
3. Որպես Աստծու զավակներ՝ մենք Աստվածամարդիկ ենք՝ Աստծուց ծնված, Աստծու կյանքն ու բնությունն ունեցող և Աստծու կենսաբանական տեսակին պատկանող՝ Հվի 1:12-13:
4. Մեր վերածննդի ժամանակ մեր մեջ մեկ այլ բնություն է ներդրվել. դա Աստծու բնությունն է՝ աստվածային բնությունը՝ Բ Պտ 1:4:
5. Աստվածային բնության հաղորդակիցը մեկն է, ով վայելում է աստվածային բնությունն ու մասնակցում է աստվածային բնությանը՝ խ. 4:
6. Եթե մենք վայելենք Աստծուն և հաղորդ լինենք Նրա էության հարստությանը, կկազմվենք աստվածային բնությամբ՝ դառնալով նույնը, ինչ Աստված է, կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, և արտահայտելով Նրան այն ամենում, ինչ մենք ենք և ինչ անում ենք՝ խ. 3:

III. Եռամեկ Աստված Նոր Կտակարանի կառուցվածքն է.

Ա. «Բայց եթե Ես դևերին Աստծու Հոգով եմ դուրս քշում, ուրեմն Աստծու թագավորությունը հասել է ձեզ»՝ Մտթ 12:28:

Բ. «Բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք՝ նրանց ներմկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անվան մեջ»՝ 28:19:

Գ. «Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, ում Հայրն ուղարկելու է Իմ անվան մեջ, Նա ձեզ ամեն բան ուսուցանելու է և ձեզ հիշեցնելու է այն ամենը, ինչ Ես ձեզ ասացի»՝ Հվի 14:26:

Դ. «Երբ Մխիթարիչը գա, ում Ես ձեզ Հորից կուղարկեմ, իրականության Հոգին, ով Հորից է ելնում, Նա կվկայի Իմ մասին»՝ 15:26:

Ե. «[Հիսուսը՝] Աստծու աջ կողմը բարձրացված և խոստացված Սուրբ Հոգուն Հորից ստացած լինելով»՝ Գրծ 2:33ա:

Զ. «Եթե Հիսուսին մեռելներից հարուցանողի Հոգին բնակվում է ձեր մեջ, ապա Նա, ով Քրիստոսին մեռելներից հարուցանեց, նաև ձեր մահկանացու մարմինները կկենդանարարի Իր Հոգու միջոցով, ով բնակվում է ձեր մեջ»՝ Հռմ 8:11:

Է. «Քանի որ դուք որդիներ եք, Աստված մեր սրտերի մեջ ուղարկեց Իր Որդու Հոգուն, ով աղաղակում է՝ Աբբա՝ Հա՛յր»՝ Գղտ 4:6:

Ը. «Որպեսզի Նա ձեզ, Իր փառքի հարստության համաձայն, Իր Հոգու միջոցով զորությամբ ներամրապնդվել տա ներքին մարդու մեջ, որպեսզի Քրիստոսը հավատքի միջոցով Իր տունը հաստատի ձեր սրտերում»՝ Եփս 3:16-17ա:

Թ. «Մեկ Հոգի.... մեկ Տեր.... մեկ Աստված ու Հայր»՝ 4:4-6:

Ժ. «Ապա որքա՜ն առավել Քրիստոսի արյունը, ով հավիտենական Հոգու միջոցով Իրեն՝ որպես անարատի, մատուցեց Աստծուն, մեր խիղճը մաքրելու է մեռած գործերից, որպեսզի կենդանի Աստծուն ծառայենք»՝ Եբր 9:14:

ԺԱ. «Ընտրված ըստ Հայր Աստծու կանխագիտության՝ Հոգու սրբացման մեջ առ հնազանդությունն ու Հիսուս Քրիստոսի արյան ցողումը»՝ Ա Պտ 1:2ա:

ԺԲ. «Շնորհք ձեզ և խաղաղություն Նրանից, ով է, և ով էր, և ով գալիս է, և յոթ Հոգիներից, ովքեր Նրա գահի առջև են, և Հիսուս Քրիստոսից՝ հավատարիմ Վկայից, ով մեռելներից Անդրանիկն է ու երկրի թագավորների Կառավարիչը»՝ Հյտ 1:4բ-5ա:

IV. Աստված Իրեն թաքցնող Աստված է՝ թաքցված Աստված.

Ա. «Հիրավի Դու Քեզ թաքցնող Աստված ես, օ՜, Իսրայելի Աստվա՛ծ, Փրկի՛չ»՝ Եսյ 45:15.

1. Թեև մեր Աստված ամենագո, ամենակարող ու ներմամբ լի է, Նա նաև թաքնվող Աստված է, ինչպես ցույց է տալիս Եսթերի գիրքը՝ 4:14:
2. Աստված ստեղծեց տիեզերքը և հետո Իրեն դրա մեջ թաքցրեց այնպես, որ մենք չգիտենք, թե որտեղ գտնենք Նրան՝ Հոբ 23:3:
3. Աստված անթիվ բաներ էր կատարում Իսրայելի զավակների միջավայրում ու անթիվ բաներ՝ նրանց անձնական կյանքում, այդուհանդերձ Նա ծածկում էր Իրեն. Նա անդադար աշխատում էր, բայց միշտ թաքցված էր մնում՝ Եսյ 45:15:
4. Մենք պետք է գիտակցենք, որ ամենակարող Աստված, ում մենք ծառայում ենք, նախկինի պես թաքցնում է Իրեն, հատկապես, երբ օգնում է մեզ՝ Հվի 14:26, Հռմ 8:28:
5. Իրեն թաքցնող Աստված գործում է մեր ներսում լուռ, այդուհանդերձ զորավոր կերպով՝ Փլպ 2:13:

Բ. Ղկս 18:1-8-ում գրառված առակի իմաստը շատ խոր է, և մենք պետք է

ճանաչենք Աստծուն, ինչպես որ Նա բացահայտված է, այն է՝ որպես թաքցված Աստծու.

1. 3-րդ խոսքի որբևայրին խորհրդապատկերում է հավատացյալներին. ինչ-որ առումով՝ Քրիստոսին հավատացողները ներկա դարաշրջանում որբևայրի են, որովհետև նրանց Ամուսինը՝ Քրիստոսը, առաջին հայացքից, նրանց հետ չէ՝ Բ Կրթ 11:2:
2. Առակի որբևայրին շարունակ գալիս էր անարդար դատավորի մոտ ու նրան խնդրում, որ իր հակառակորդից վրեժ առնի. մենք պարտավոր ենք այս վրեժխնդրության համար հաստատակամորեն աղոթել և չվհատվել՝ Ղկս 18:1, 3.
   ա. Երբ մեր Ամուսինը, առաջին հայացքից, բացակայում է, և մենք որբևայրու պես թողնված ենք երկրի վրա, ժամանակավորապես թվում է, թե մեր Աստված անարդար դատավոր է՝ խ. 6:
   բ. Թեև Նա անարդար է թվում, մենք, միևնույն է, պետք է դիմենք Նրան, հաստատակամորեն աղոթենք և նորից ու նորից անհանգստացնենք Նրան, քանի որ Նա Իր ընտրյալների համար, «ովքեր օր ու գիշեր Իրեն են աղաղակում», արագորեն վրեժխնդրություն կանի՝ խխ. 7-8ա:
3. «Երբ Մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատք կգտնի՞»՝ խ. 8բ.
   ա. Հունարեն տեքստում որպես «հավատք» թարգմանված բառից առաջ հոդ է օգտագործված, որը ցույց է տալիս, որ սա որոշակի հավատք է՝ հաստատակամ հավատք մեր հաստատակամ աղոթքի համար, ինչպես որբևայրու հավատքը:
   բ. Հավատքը, որի միջոցով մենք փրկվել ենք, հավատքի նախնական փուլն է. այն հավատքը, որը մեզ կյանքի միության մեջ բերեց Քրիստոսի հետ, կապող հավատքն է, հավատք, որը մեր մեջ է մտնում Եռամեկ Աստծու հետ մեր մշտական շփման միջոցով, որպեսզի ապրենք Աստծու Որդու շնորհիվ՝ Հռմ 1:17, Գղտ 2:20, Հվի 14:19:
   գ. Կապող հավատքը հաղթողներին ներկայացվող աստվածային պահանջն է, որպեսզի նրանք դիմավորեն Քրիստոսին Իր հաղթական վերադարձի ժամանակ՝ Ղկս 18:8բ.
      1) Կապող հավատքը Եռամեկ Աստված է, ով շարժվում է մեր մեջ, որպեսզի մեզ կապի Իր անքննելի հարստությանը՝ Եփս 3:8:
      2) Կապող հավատքը հավատացյալների հավատքն է, որոնք չեն ապավինում իրենց, այլ ապավինում են Աստծուն՝ Բ Կրթ 1:9:
      3) Երբ Տեր Հիսուսը վերադառնա, Նա մի շարք հաղթողների կգտնի, որոնք ապրում են կապող հավատքով, և նրանց գանձ կհամարի Իր թագավորության համար Իր թագավորման հազար տարիներին՝ Ղկս 18:8բ, Հյտ 20:4, 6:

© 2026 Living Stream Ministry